

իր կերակուրը նոյն տունէն. բայց տան ուտէրն վերջապէս 'ի հարկէն բռնադատեալ, մտածեց արտաքսել այդ տաղտկալի հիւրը: Փորձեց նախ ընծայ տալ, բայց ընդունող մը չգտնուեալ, հարկեցաւ սպանութեան խորհրդոյն ձեռք գտնել:

Այն գետը մօտ էր. ուստի լաւ և դիւրին համարեցաւ խեղճամբը սպանութիւնը: Այն առաւօտն որ շանը կենացը վերջինը պիտի ըլլար, սովորականէն աւելի սէր ու գոյթ ցուցուեցաւ խեղճ կենդանւոյն վրայ. անանկ որ բաժանումն առանց արտասուաց անհնարին եղաւ: Ամենէն աւելի տանտիրոջ սիրտը ելած էր, որուն կ'իյնար դահճութեան պաշտօնը: Գետափի նաւակ մը գտնելով, մտաւ և յառաջեց դէպ 'ի գետին մէջ տեղը, ուր ջուրն խորունկ էր, և տեղին հետի յափանց: Գծախառ կենդանւոյն պարանոցէն կարուստած ծանրակէտ քարն, պիտի իջնցնէր զինքը մինչև 'ի խորս գետոյն: Հասեալ 'ի միջավայր տեղին, 'ի վեր առաւ ծանրոցը լի երկիրի և դողմամբ. և բոլոր անձամբը յենելով նաւակին եզերացը վրայ՝ դէպ 'ի դուրս կարկառեցաւ և թողուց ծանրոցը ջրոյն մէջ: Բայց քարին ծանրութիւնն և կամ երկնից պատուհանն՝ որ վրէժխնդիր է նոյն իսկ կենդանաց դէմ եղած անիրաւ անգթութեան, գլորեց զինքն ալ շան հետ 'ի Այն գետ, ուր անտարակոյս կը կորսուէր և թէ չուէր իրեն օգնութեան չհասնէր: Բախտն այնպէս տնօրինել էր որ խեղճ արարածը կարենայ ոտքերովը քակել պարանոցէն կախուած քարն և դառնալ անվնաս 'ի վերայ ջուրը. ուր տեսնելով իր տէրն 'ի վտանգ կորստան, զիմեց լուսալորով առ իմ անկիւն շարժութեամբ, և մտաուցանելով թաշաւ մազ թիկունքը, բերաւ մինչև ցգետափն 'ի զարմանաւ ամենայն տեսողաց. որ և վարձատրեցաւ իր ըրած բարեգործութեանը համար. վասն զի հարուստ անձ մը որ գործոյն ականատես եղեր էր, գնեց այն շունն և միշտ տունը կը պահէր:

միս գիշեր կ'ըլլայ: Այս 23 1/2 աստիճան միջոցը կամ գօտին՝ կը պարունակէ իր մէջ Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկոյ հիւսիսագոյն ցամաքները. առջինին մասն է Լատինա և Սամոյեթը. երկրորդին՝ Սիպերիա, յՈւրալ լեռանց մինչև 'ի Պէրնկի շեղույցը. երրորդին՝ Կրէնլանտիա և Պաֆինի ծոցէն մինչև 'ի բեւեռային ծովն եղած կղզիք: Այն երկրիս ուրիշ կողմերուն հետ բաղդատենք՝ հարկ է այս գօտւոյս բուսաբերութիւնն Ալպեան կամ Լուռային անուանել. միայն թէ ուրիշ տեղ ալպեան բոյսը շատ մեծ բարձրութեանց վրայ կ'ըլլան, իսկ հօս ամենէն ցած տեղերը ալ. այս տեղի դաշտերն իսկ սառնապատ անապատներ են, և բոյսերնին հարկ է որ հազարաւոր մեղրաշաքի բարձր լեռանց բուսոց նման ըլլան. միայն թէ ամեն տեղ ալ այնպէս ընդարձակ ձիւնապատ դաշտեր չեն երևիր: Ամենէն ամալն և ահաւոր կերպարանք կ'ընծայեն կղզիակն կողմանք, ինչպէս Պաֆինի (որ և Հոստոնի) ծոցոյ, Ժայռերով և կիրճերով կտրտուած, որոց մէջէն Սառուցեալ ծովուն երեւնէ դուրս կը ցցուի Մեծիկ կղզին առօրինակ ատրոնի ձևով, 74-77° լայնութեան տակ. սրածէ կատարներով և բարձր բլրոց շարքով մը, որոց մէջէն կը բարձրանան ինչուան 2-3000' դաշաթունք: Այս նման են ուրիշ կղզիք ալ, և ամենէն ահաւորն է Կրէնլանտիա, որոյ սառնածոյ դաշաթունքն ինչուան 5000' բարձր են:

Այս գօտւոյն տակ ամառ տառն փոխանակ գետոց՝ սառնահողով հեղեղներ կը թաւալին խորածորոց մէջ. և ծանր ծանր կը հասնին 'ի Սառուցեալ ծով: Պաֆինի ծոցէն լեռնահասակ աւաղանքներ կու գան 'ի հիւսիսոյ, կը զարնուին Կրէնլանտիոյ փախանց, և կտորտուած կ'երթան ծոցոյն նուազ պաղ հոսանքներովն՝ աւելի հարուային կողմեր, որով կ'ազատի բեւեռային գօտին բոլորովին սառնէն. կը կարծուի թէ տառուկ հոսանք մը ծովուն խորէն 'ի երթալ մինչև 'ի բեւեռ, և հօս վեր ենելով բեւեռին սահմանները լոյծ ծով մը կը պահէ, մթնոլորտը կը մեղմացնէ, որով բոյսը և կենդանիք ալ կրնան ապրիլ: Այս յատկ է որ այնչափ ջանքով կը դիմեն յանդուգն նաւորք դէպ 'ի բեւեռ, անոր գաղտնիքն իմանալու: Ասով յայտնի կ'ըլլայ որ միայն աշխարհագրական լայնութեան դիրքն չեն պատճառ ցրտութեան. վասն զի մինչ Կրէնլանտիա 60-73° աստիճանաց տակ այնպէս սառնասառուոյց է, նոյն աստիճանք շատ աւելի բարեխառն և բուսաբեր Եւրոպիա, Հուստ և Ֆինլանտիա. որովհետեւ Նորուեկիոյ եղերէն կ'անցնի

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԲԵՒԵՌՍՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

Բեւեռային երկիր ըսելով պէտք է իմանալ հիւսիսային բեւեռէն մինչև իր ցրտալին շրջանակին միջոցը, յայտնութեան 66 1/2 աստիճանէն մինչև յ' 90°, ուր տարին անընդհատ ինչուան 6 ամիս ցորեկ և 6 ա-

տոր հոսանքն, իսկ Եռետաջ և Ֆինլան-
տից բովերը չեն գար սառնակայող Սա-
ուույնալ ծովուն, չոյն պատճառաւ է որ
Հիւսիսային Հրուանդանին (Cap-Nord) 71⁰
լայնութեան տակ միջին բարեխառնութիւնն
է 10⁰. իսկ ի Պուլթիա 71⁰ լայնութեան տակ
120⁰ պրոցէն վար. Մեծ Բրիտի կղզին 73⁰ լայնու-
թեան տակ 150⁰, իսկ ի Նեղուցն Սմիթհ
78⁰ լայնութեան տակ 110⁰.

Լուսոյ կողմանէ հաւասար են ամենայն
մաստերը բեւեռային երկիրներու, հաւասար
գիշերով մը պատուած, որ է մեծ պատճառ-
ցրտութեան. սակայն բոլորովին անտեսա-
նելի մութ պէտք չէ ենթադրել. զի ոչ միայն
հիւսիսայան և արծաթափայլ պայծառ լու-
սին մը կը լուսաւորեն այն ամսօրեայ գի-
շերը, այլ և արևուն ճառագայթքը պզտի
անկիւնածէ մը ձգելով Հորիզոնին վրայ՝
գոնէ օրը երկու ժամի չափ ինչուան գրոց
տառերն որոշել և կարգաւ կու տան: Իսկ
եղանակք բարեխառնութեան ցանկարծ իմն
և անըզմէջ կը յաջորդեն ի բեւեռային եր-
կրի. հոկտեմբերի կը սկսի ձմեռն, և կար-
ծես թէ մէկէն կը դադրի կենդանութիւն,
թէ և երկինք անամպ են և օդը հանդարտ.
մամուռներ կենդանիք կը փութան մեկնե-
լու գոռնալու ի հարաւային երկիրս: Ինն
ամիս ջուրերը կը կապուին, գետինը ձիւ-
նապատ կ'ամայնանայ. ցրտութիւնն երբեմն
այնքան կը սաստկանայ՝ որ ջերաչափից
սնդիկին և գինձօղին ալ կը սառնի եթէ բաց
օդոյ դրուին. օդն այնպէս կը նըրքանայ, որ
մինչև 2 քիլոմետր և աւելի հեռաւորու-
թեամբ մարդիկ ձայն կը հասցընեն և կրնան
խօսակցիլ. ամենէն թեթեւ շուշաւ կը լսուի,
միայն թէ ձայն հանող մ'ըլլայ. որ գրեթէ
իսպառ կը պակսի, և մեռելատիպ լուծիւն
կը տրիէ հօն: & ի դուր ճամբորդը կը փռն-
տուէ բարեկամ մը. (այս ըստոյն ալ այն կող-
մերը ձմերոզ մէկն է.) ոչ հնչիւն գանգակի,
ոչ ձմիւն շան, ոչ ձայն քաղաղի, չեն ի-
մացներ թէ մարդոյ ընակարան մ'ըլլայ
մօտ տեղ: Զամբորդը միայն իր շնչոյն տուր-
եաւոր, միայն սրտին բաբախիւնը կը լսէ:
Սյապիսի վայրկեաններ ինչ սրտառուոր,
ինչ ծանր է բեւեռային տառնածութիւնն:

Յունիսի վերջերը սառույցը կը ճարճատին
կոտորտին, ձիւները կը նուազին, օրերն
երկնցած են, ամառը մէկէն ի մէկ կը
հասնի, քիչ օրուան մէջ գետինը կը կանաչ-
նայ, հարաւային կողմէն թեւաւոր ամպոց
պէս սուրալով կը հասնին երամ երամ
սաղք և բաղք, անոնց ետէն տարւահաւք
և ուրիշ թռչունք, լրոց կարկաջք և միջա-
տաց բզկիւնք կը լրտին գետին վրայ: Արեւը
կը բարձրանայ և ամսօրեայ ժամանակ հո-

րիզոնէն չհեռանալով տաքութիւնն ալ չի
նուազեցներ. ասով բուսաբերութիւնն և
կենդանութիւնը շուտով կը բարգաւաճին.
կարճ ժամանակ մը բուսական կ'ըլլայ բոյս
ծաղիկ և պտուղ բերելու: Այն նոր Հայած
ձիւներով ճախնացեալ գետիններու երես
խիտառիտ կը բացուին՝ ճերմակ և դեղին
ծաղիւնք, ինչպէս տառնային մարմն մա-
դիկ (geum). պէսպէս պտիկը (anémone),
քարհերձուկը, և կապուտակ մկնականջը
նման ալպեայցն: Այլ ծառ չերևիր. ուռե-
նին անգամ հազիւ կ'անցնի ցրտային գո-
տինն անդին: Ուր որ գետինն աւելի տա-
գուտ է, ինչպէս ի կրէյլանտիա և ի Մեյ-
վիլ՝ աւելի կը յաջողի բուսաբերութիւն.
Իսկ ուր կաւուտ և մառնուտ է՝ ոչ այնչափ,
վասն զի ասոնք շատ ջուր կը պահեն, որ
արգել է բուսոց անելուն:

Քոչպիւկոչեալ ծովածոցին եզերքն երկա-
նաշար ժայռեր են 70-90՝ բարձր, իրեք տակ
կամ խաւ բաժնուած. ստորինն է սառն,
20-30՝ թանձր. միջինը կաւուտ գանգուած
մը կենդանեաց բրածոյ նշխարք, զիւրիւր
տորփային հող բուսաբեր, որ յօռիս, օ-
գոստոս և սեպտեմբեր ամսոց մէջ կը կա-
նաչնայ, եթէ կանաչ կրնան ըստիլ լոռք
և մամուռք. կը բերէ կարճ ուռենիներ ալ,
կոյտկոյտգայլեանաբեր (sambuc), մատիտեղն
(polygonum). մինչդեռ ասոնց բով գաղա-
նաց կմախքներ դուրս կ'ելլեն սառուցից
տակէն, և ինչուան մորթք մամուռթից և
գերեզմանական փտած ու հոտած սև հող
մը, մեծամեծ ծանիք փղաց 12՝ երկայն և
120-150 քիլոիրամ ծանր: Ուրիշ կողմիւ
բեւեռային ամառուան եղանակին կ'երևին
կը կլիմայից ալպեան բոյսք կամ անոնց
նման տեսակք. ինչպէս են քարհերձուկը,
լուաղեղ, մատիտեղն, կոտեմ, հինգտե-
րեուկ, խաչխաչք, սեգք, դրքալիսա (coch-
learia), և այլն. կը գտուին և յատուկ տե-
սակք բուսոց, բայց միշտ նմանութիւն
մ'ունին ալպեան բուսոց: Եատ զարմանալի
կ'երևի այս նմանութիւնն երբ ուշով դի-
տուի. քոչեկի (thlaspi) նման խաչածե-
ծաղիկ մը կայ հօն պրայս կրպեղաւ կոչուած,
որոյ նմանը գտուի ի կլոքներ լեքին կա-
րինթիոյ յԱստրիա և կոյուի պրայս ալ-
պեան. ասոր բով ի կլոքներ գտուած մա-
մուտ մ'ալ (voitia nivalis) նոյնպէս կը գը-
տուի Մեծբրիտ պրայս կրպիւլային բովե-
րը և կոչուի հիւսիսային (voitia hyperbo-
rea). 50 տեսակ մը բուսոց գտնուած են
ի բեւեռային կողմանս, յորոց 3 կամ 4 տե-
սակք միայն չեն գտուած յԱլպեայս:

Խնամքով մշակելով ցրտային գոտոյ
տակի կը բուսնին և կը հասունանան քանի մը

բանջարեղէնք, սպաննախ, հազար, կա-
ղամբարողի (choux-raves), և այլն. բայց
համեմային մասէ գործի կ'ըլլան. ստեպ-
ղինը հազիւ ուտուելու համար կը մեծնայ,
նոյնպէս և գետնախնձորը. ասոնք ալ 70
սասործինն անդին գրեթէ չեն անցնիր:
Իսկ վառելու համար կործ թխտեստակ
ուռեխին և քանի մը թուփը ու խոտեղէնք
կը գործածուին. ասոնցմէ գատ տորիկն, և
տեղ տեղ հանքային ածուղ յայտնուած է.
'ի կրէնյանտիա յատուկ ձևով վառարաններ
կը շինեն տորփը գործածելու համար: Ու-
տելու համար բաց 'ի յիշեալ բանջարեղի-
նաց գտուին և հատապտուղք թիփոց, որք և
ձնան տակ անեղծ մնալով՝ ամին ատեն կը
դառուին. այսպէս կը մնան երբեմն խա-
ւարտք ալ: Կան դարձեալ արմատներ որ
որ կ'ուտուին 'ի կրէնյանտիա և յիսկիմա-
ցիս. ինչուան բլլաւոր մամուռներ ալ կան
որ ուտելու կու գան: Դոյն ալ կը բերէ
քանի մը բուսող սերմանք, որ կ'աճին յա-
փուռներ և կը մատակարարեն ուռեղի մը:

Բայց բեւոսային երկիրներու ընդհանուր
ամառնային կերպարանքն է անմշակ և ան-
նաւարկելի ճախիք, որ 'ի Սիպերիա թուն-
տաւ կոչին, ոմանք պարզ ջրիմուռով պա-
տած են, ոմանք յօռեղով. ասոնք են կերա-
կուր յոն կոչուած հիւսիսային եղջերուաց:
Թունտրայք կը նմանին Սահարայ անապա-
տաց՝ միաձև հարթ հաւասար ճերմակ տես-
իւամբ և մեծ ընդարձակութեամբ. որոց
միջոց հազիւ երբէք պզտիկ կանաչ գետին
մը կ'երեւի, ինչպէս Բելջորայ գետոյ ափուն-
քը 660-680 լայնութեան տակ. իսկ այս գե-
տոյն վերի կողմերն այնքան ամայի և տը-
խուր են՝ որ տեղացի Սամոյետք 'ի ըսեն թէ
Սատուած չէ ստեղծած այն տեղը՝ սոյ
սկզբնական մեղքէն վերջը դուրս եկեր է:
Գետինն ալ որ ցած ու ճակիճնեղով և ա-
նապատներով ձևացեր է՝ սաստիկ պաղ
է, որով և անընդունակ բուսաբերութեան.
« քարերն անգամ հօտ չեն կրնար բուս-
նիլ », ըսած է ճամբորդ մը: Մէկ հատիկ
միսիթարանք այսպիսի ամայութեանց կամ
զբօսանք՝ լուսոյ խաղերն են. Լաբորնոյ ա-
պալիք բարձր ժայռերը տեսակ մը ցուա-
ցումն ունին՝ որ տեսնողը կրնայ հրաբուխ
կարծել. փայլատական նման հորիզոնը կը
լուսաւորեն և կը դազրին, նորէն նորէն
նոյնպէս կրկնելով: Այս այս փոքր միսի-
թարանք և սակաւ բերքն ալ, բնութեան
միշտ գեղեցկութիւն մ'ունոզ կերպա-
րանքն, օդոյ պարզութիւնն և հանգար-
տութիւնը, պէսպէս ձեք և դիրք սառին և
ժայռին, դարձեալ երկիրը սիրելի կ'ընեն
իր բնակիչ Լաբոնին, Սամոյետին, Էսկի-

մացուն, որք չեն թողուր հեռանար աւելի
հարաւային կողմեր:

Եթէ ուզենք աչք մ'ալ դարձնել հարա-
ւային բեւոսին կողմերը՝ միայն սառն ու ջուր
պիտի տեսնենք. ոչ կենդանի և ոչ բոյս.
710 լայնութեան տակ Հուբըր բնագէտն՝
Բալմէր և Լուի-Ֆրիլիպ կոչուած երկիրնե-
րու վրայ գտաւ 18 տեսակ մը մամոնոց, լա-
ռից և ջրիմուռից՝ զորս բուսող ուրուական
կոչէ և ոչ բոյս. սակայն անոնք ալ նման են
հիւսիսային բեւոսին տակ գտնուածներուն
կամ մկրճաւոր նմանիք: Գայտ է որ հա-
րաւային ծովերուն ընդարձակութիւնն և
ցամաքին քիչութիւնը թող չեն տար ա-
րեւուն տարբութեան երկար ազդելու, որով
և բուսող անձու. ապա թէ ոչ հարաւային
բեւոսն ալ հիւսիսականին աւելի ցուրտ
պիտի չըլլայ. մանաւանդ որ իր գետինն
տակ կրակի շտեմարան մը կայ՝ զոր չեն
կրնար մարել ձիւնք և բուքք. 77 1/2⁰
լայնութեան տակ կը բարձրացայ Երեբոս
լեռն աւելի քան 12000', և չրջակայ սառ-
նապատ դաշտերուն վրայ կը թափէ բոցե-
ղէն հեղեղ մը՝ ահաւոր փայլմամբ լուսա-
ւորելով գտններ և զհորիզոն. և սոյն այս
իսկ գետնին բարձրութիւնն կը լուսահա-
տեցնէ հօն. ալ հիւսիսային սահմանաց
նման բոյսեր կամ ովախս մը գտնելու:

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հիւսկոպիան շերամի որդոյն. — Կրնամք
ըսել որ շերամի որդոյն զանազան տեսակ հի-
ւանդութիւնքն իր կերակրէն կախումն ունին. և
որովհետեւ կերածը շարունակ թթիւնոյ տերեւ է,
անոր համար տերեւոյն աւելի կամ նուազ յառ-
կենդան և 'ի վնասակար գոյացութեանց բաղա-
դրեալ ըլլալով՝ մեծ ազդեցութիւն ունի շերամի
որդոյն առողջութեան և մտաբերին ընտրու-
թեան վրայ: Վասն որոյ որպէս զի թթիւնոյ տե-
րեն ունենայ բաւականապէս այն օգտակար գո-
յացութիւնքն՝ որովք շերամի որդն իբրեւ փոքրիկ
մեքենայ կը շինէ մտաբեր, պէտք է մշակել զայն
ամենայն մտաբերութեամբ ուրիշ պարագաւ ծա-
նոյ նման: Եւ ինչպէս սկզբան արեւնք բերելը
մը յետ անցանելոյ ամաց կը կորուսանէ իր բա-
րեբերութիւնը թէ որ պտուղն աննշուա միայն
ուշ գնեմք առանց ամենեկին միտ գնելու զբա-
ցընել զայն յետագայ տարւոյն համար, նոյնը կը
պատահի և թթիւնոյ ծառայոյն, որ յետ բազում
անգամ մետաքսի յարմար գոյացութիւնքը ժողո-